ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհրդի
2011թ.-ի ապրիլի 21-ի թիվ 05/02Լ որոշմամբ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին**
**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2010թ.-ի գործունեության համապատասխանության վերաբերյալ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհրդի կողմից հաստատված բանկի Ներքին աուդիտի 2010թ-ի տարեկան Աշխատանքային ծրագրի համաձայն, բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներում կատարված համալիր և նպատակային ստուգումների ընթացքում՝ Ներքին աուդիտի կողմից իրականացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Հաշվետու տարվա ստուգումների ընթացքում ուսումնասիրվել են բանկի գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, բանկի կառավարման մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին:

Ուսումնասիրվել են բանկի ներքին իրավական ակտերը՝ գործող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին դրանց համապատասխանության տեսանկյունից:

Ստուգումների նպատակն է հանդիսացել նաև բանկում առկա ռիսկերի բացահայտումն ու գնահատումը, բանկի կողմից դրանց կառավարման մակարդակը և ներքին հսկողության համակարգի ներդրման գնահատումը, ինչի նպատակով բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներում գնահատվել են ներքին հսկողության գործուն համակարգի ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Կատարված աշխատանքների հիմնական նպատակն է եղել բավարար հիմքերի ստեղծումը, որոնք հնարավորություն կընձեռեն արժանահավատ կերպով գնահատել բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և կազմել համապատասխան եզրակացություն:

Հիմք ընդունելով վերը նշված աշխատանքների արդյունքները՝ Ներքին աուդիտի կարծիքով 2010թ-ի գործունեության ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

**Ներքին աուդիտի վարչության պետ /**
**Գլխավոր աուդիտոր՝** **Վարդան Հովսեփյան**